ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

(1869-1923)



Թումանյանի երգերը
Կարդալիս՝ միշտ ես
Միտք եմ անում, թե արդյոք
Կարո՞ղ եմ ես էլ
Լինել այդքա՜ն իմաստուն,
Երբ լինեմ ծեր...

Եղիշե Չարենց

ԶՎԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծի արժանավոր ու նրբամիտ դուստրը՝ ***Նվարդ Թումանյանը***, հայրիկի մանկության արկածալի օրերից պատմում է նրանից լսած հետևյալ զվարճալի դեպքը.

«Մի ամառվա շոգ օր՝ կալի (հացահատիկը մանրելու) ժամանակ, Թումանյանի հայրը եզները կալն է տանում լծելու: Հենց այդ ժամանակ գյուղացիները գալիս են, հորը գյուղամեջ կանչում: Ամառվա շոգ օր, եզներն սկսում են այս ու այն կողմ գնալ: Հովհաննեսը քար է գցում. քարը գալիս է, դիպչում Չերքեզի (եզան անունն էր) պոզին, պոզը դուրս է ընկնում: Հովհաննեսն իսկույն վազում է, պոզը նորից տեղը դնում: Քիչ հետո հայրը գալիս է, ուզում է եզները լծել: Չերքեզը ցավից մոտ չի թողնում, որ ականջը բռնի: Հայրը՝ միամիտ, պոզիցն է բռնում, պոզը մնում է ձեռին, իսկ եզը փախչում է: Տերտերը հասկանում է, որ սա իր տղայի գործն է, բարկանում է, պոզը շպրտում է տղայի կողմը, թե՝ «Դու ինձ համար տուն չես շինի»: Հովհաննեսը թողնում է կալը, փախչում է Դրդի (բլրի անուն է) կողմերը՝ իր սիրած վայրերը...»:

ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Ինչ շրջասույթներով է հայտնի Հովհաննես Թումանյանը:

Հովհ. Թումանյանը ժողովրդին հայտնի է երեք բնորոշումներով՝ ***Ամենայն հայոց թամադա*** (նա ուրախ, կերուխում սիրող մարդ էր), ***Ամենայն հայոց որբերի հայրիկ*** (Արևմտյան Հայաստանից վերադառնալով՝ Էջմիածնում բացել էր որբանոցներ) և ***Ամենայն հայոց բանաստեղծ***: Վերջին բնորոշումը Թումանյանը հանգամանքների բերումով է ինքն իրեն տվել:

1915 թ. օգոստոսի 19-ի գիշերն Էջմիածնում սկսվում է հորդ անձրև: Գաղթականությունը բաց երկնքի տակ էր: Թումանյանը, թիկնոցի մեջ փաթաթված, շտապում է հազարավոր մարդկանց առաջնորդել դեպի վեհարանի կիսավարտ նոր շենքը, որը *Գևորգ Ե* կաթողիկոսը մերժել էր հատկացնել նրանց: Բանաստեղծը զայրացած էր և, հակառակ վեհափառի արգելքին, գաղթականներին տանում է այնտեղ: Հաջորդ օրը վրդովված կաթողիկոսը Թումանյանին կանչում է իր մոտ՝ բացատրության: Այդ հանդիպման մասին ահա ինչ է պատմում Նվարդը. «Հայրիկի բացատրությունը չի գոհացնում կաթողիկոսին, և նա զայրացած հիշեցնում է՝ «Դուք գիտեք, որ ես Ամենայն հայոց կաթողիկոսն եմ», հայրիկն էլ պատասխանում է՝ «Գիտե՛ք, որ ես էլ Ամենայն հայոց բանաստեղծն եմ»»: